

ԲԻՒԶԱՆԴԱԿԱՆ ՆՈՄՈԿԱՆՈՒԻ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐԻ ԶԵՐԱԳԻՐԸ

Իրաւական բնոյթի՝ կանոնագիտական եւ դատաստանագիրք ձեռագրերը հայ մատենագրութեան մէջ մեծ թիւ են կազմում։ Դրանք բազմաբնոյթ ժողովածուներ են, որոնց մէջ ուրոյն տեղ ունեն կանոնագրքերը, Դատաստանագրքերը, յունարէն, ասորերէն, լատիներէն եւ այլ լեզուներից կատարուած այդ մատենագրութիւնների իրաւաբանական բնոյթի երկերի թարգմանութիւնները։ Միայն Վենետիկի Միիթարեան միաբանութեան մատենադարանում պահպանուող նմանատիպ ձեռագրերի, աւելի ճիշտ միայն կանոնագիտական ժողովածուների քանակը հասնում է շուրջ 40ի¹, որոնց մէջ հաշուառուած չեն այն մատենանները ուր ընդօրինակուած են զանազան իրաւաբանական բնոյթի աշխարհիկ Դատաստանագրքերն ու կանոնական բնոյթի մանր երկերը, այս կամ այն աշխարհիկ եւ եկեղեցական իրաւաբանական ժողովածուներից ընդօրինակուած հատակոտորներ պարունակող մատենանները։ Դրանց բոլորի հետազոտութիւնը Հայոց իրաւունքի համակողմանի հետազոտութեան համար ունի չափազանց կարեւոր նշանակութիւն, քանի որ դրանց բովանդակութեան իմացութիւնը օգնում է մեզ առաջնորդուել միջնադարեան հայոց իրաւունքի եւ հասարակութեան հետազոտութեան դեռեւս մութ բաւիդներով։

Ներկայ հրապարակման մէջ ես ցանկանում եմ անդրադառնալ մի ձեռագրի, որ բաւարար ուշադրութեան չի արժանացել ո՛չ հայագէտների, ո՛չ բիւզանդագէտների եւ ո՛չ էլ միջնադարեան իրաւունքով զբաղուող մասնագէտների կողմից։ Խօսքս վերաբերում է Վենետիկի Միիթարեան միաբանութեան թ. 1661 մատենին,

1 ՃԵՄՃԵՄԵԱՆ, Հ. Ա., Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Միիթարեանց ի Վենետիկ, ԽԱ. Զ., Պատմագիրք Հայոց, Կանոնագիրք, Դրիգոր Նարեկացի, Ներսէն Շնորհալի, Ներսէն Լամրոնացի, Աղօթագիրք, Վենետիկ 1996, սիմ 325-498:

որի ամբողջական նկարագրութիւնը պատկանում է երջանկայիշատակ Աբբահայր Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեանին, որի վաստակը Մխիթարեան Մատենադարանի ձեռագրերի նկարագրութեան գործում նրա անունը փառաւորեց իր միաբանութեան միւս երանելիների շարքում։ Նրա աշխատութիւնները հայագէտների բոլոր սերունդների յաւերժական ուղեկիցներն են։

Մեզ հետաքրքրող ձեռագրի մասին առաջին համապարփակ տեղեկութեան համար պարտական ենք Մխիթարեան միաբանութեան միւս ճիւղի, Վիեննայի դպրոցի ներկայացուցիչ՝ Հ. Ներսէս վրդ. Ակինեանի հսկայածաւալ գիտելիքներին եւ գիտական պըրպատումներին։ Իր «Սիմէոն Պղնձահանեցի» մենագրութեան մէջ վաստակաշատ Մխիթարեան հայագէտը «կանոնագիրք յունաց» վերնագրի տակ առաջին անգամ համառօտակի նկարագրում է Վենետիկի թ. 1661 մատեանը, տեղեկութեան համար շնորհակալ լինելով վենետիկեան Մխիթարեանների մէկ այլ երախտաւորդի. «Ճեռագրի մասին կը հաղորդէ ինձ Մեծ. Հ. Ներսէս Վ. Տէր-Ներսէսեան 5 փետրուար 1951 թուակիր պատուականով կարեւոր տեղեկութիւններ, որոնց համար կը յայտնեմ Մեծ. Հօր պատագին շնորհակալութիւն»². Հստ Գերապատիւ Հ. Ներսէս Տէր-Ներսէսեանի նկարագրութեան՝ վիեննական Մխիթարեան միաբանը բերում է մեզ հետաքրքրող ձեռագրի համառօտ նկարագրութիւնը եւ 1352ի յիշատակագրութիւնը³: Ինչպէս նկատեցինք, Հ. Ներսէս Ակինեանը վենետիկեան մատեանը բնութագրում է «Կանոնագիրք յունաց» եւ ձեռագիրը ներկայացնում է իր մենագրութեան «հայ-հոռոմ գրականութեան մեացորդներ ԺԳ-ԺԸ. դար» յաւելուած գլխում։ Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեանը հետեւելով Հ. Ներսէս վրդ. Ակինեանին, իր յիշատակուած ձեռագրացուցակում վենետիկեան հաւաքածոյի թ. 1661 (Կանոնագիրք Զ.) մատեանն անուանում է «Կանոնագիրք հայ հոռոմոց և Պատմութիւն ծողովոց», եւ տախս մատեանի բոլոր նիւթերի մանրամասն նկարագրութիւնը⁴: Հայ կանոնագիտական գրականութեան մէջ ձեռագիրը եղակի է իր բովանդակութեամբ։ Նմանատիպ այլ մատեան անյայտ է հայկական ձեռագրերի ողջ աշխարհին։ Բազմավաստակ եւ մեր մատենագրութեան ե-

2 Ակինեան, Հ. Ն., Սիմէոն Պղնձահանեցի և իր քարգմանութիւնները վրացերէն», ի Ազգային Մատենադարան, ՃԿԴ, Մխիթարեան տպարան, Վիեննա 1951, 257:

3 Անդ, 256-259:

4 Ճեմճեմեան, Հ. Ա., Մայր Յուցակ, Յշ. աշխ., սիմ 345-354:

զակի գիտակ Հ. Ներսէս Ակինեանը այսպէս է բնութագրում կանոնների մեջ հետաքրքրող ժողովածուն. «Կանոնագիրք Յունաց կամ Հայ Հռուոմց, իին թարգմանութիւն պահմամբ յունական հնչմանց, անհարթ ոնով, յորում կան կանոնադրութիւնների Հարց եւ ժողովոց եւն.»⁵:

Հ. Ն. Ակինեանը, որ միակ հեղինակն է, որ բնութագրել եւ ներկայացրել է մեզ հետաքրքրող մատեանը իբրեւ յունարէնից կատարուած թարգմանութիւն, թուարկել է իր գրքի հայ քաղկեդոնականների թարգմանական թողոնների մասին խօսող երկերի շարքում, հետեւապէս՝ ժողովածուն իրաւացիօրէն համարել է հայ քաղկեդոնականների միջավայրում թարգմանուած յուշարձան: Այս նախնական դիտողութիւններն էլ առաջնորդել են մեզ ձեռագրի բերած կանոնագիտական եւ հայադիտական նորոյթն հետագօտելիութեան:

Հ. Մահակ Ճեմճեմեանը ձեռագիրը նկարագրելիս նկատում է. «Ժամանակ թնագրին գրչութեամբ գրուած յիշատակարանը չունի թուական, սակայն տարբեր գրիչ մը կը յիշատակէ թէ :ՊԱ: (=801/1352) թուականին գնած է Ձեռագիրս, ուստի 1352էն առաջ գրուած է, եւ այն է՝ ԺԳ.-ԺԴ. դարուն»⁶: Վենետիկի Միխիթարեան Մատենագարան մուտքագրուած Ձեռագրի մասին երջանկայիշատակ Արքահայրը բերում է նաեւ հետեւեալ յաւելեալ տեղեկութիւնը. «Այս գիրք յիշատակ է Շոռորեցի պարոն Ռաֆայէլին, զոր երեր ի Վարատինու եղբայր նորա Հ. Սուլիաս վլրդ.ն մեր Աղամալեան, յամի տեառն 1781, յամեանն Յունվարի»: Այս տեղեկութեան մէջ յիշատակուած տեղանուններից Շոռորթը գտնւում է Նախիջևանի Ջուղա գաւառում⁷, իսկ Սուլիաս վարդապետը հաւանաբար ծառայել է ԺԲ. Դարից սկզբնաղբիւրներում յիշատակուող Վարատին Աւստրո-Հունգարական բնակավայրում (ռում. Օրագէս, հունգ. Նագիվարադ, գերմ. Գոռոսվարդէն)⁸, ուր ժամանակին կար մեծաքանակ

5 ԱԿԻՆԵԱՆ, Հ. Ն., նշ. աշխ., 257:

6 ՃԵՄՃԵՄԵԱՆ, Հ. Ա., Մայր Յուցակ, նշ. աշխ., սիւն 345:

7 ՅԱԿՈԲԵԱՆ, Թ. Խ. - ՄԵԼԻՔ-ԲԱԽՇԵԱՆ, ԱՏ. Տ. - ԲԱՐՄԵՂԵԱՆ, Հ. Խ. , Հայաստանի եւ յարակից շրջամաների տեղամունքների բառարան, Խո. Դ., Երեւանի համալսարանի հրատարակութիւն, Երեւան 1998, 148-149: Հմմտ. ԽՆՃԵԱՆ, Հ. Ղ., Աշխարհագրութիւն շարից մասանց աշխարհի, մասն Ա. Ասիա, Խո. Ա., Ա. Ղազար, Վենետիկ 1806, 269:

8 Այս թնակավայրի մասին տե՛ս ՏԱՅԵԱՆ, Հ. Ղ., Մայր Դիւան Միխիթամանց Վենետիկոյ ի Ս. Ղազար 1707-1773 ի ծագմանէ ուխտիս միջնէն ցրաժամումն թրեստեամ Հարց, Ս. Ղազար, Վենետիկ 1930, 86, ՂԴ: Տե՛ս

հայ ազգաբնակչութիւն⁹, անգամ վկայութիւն կայ, որ այնտեղ Մ-խիթար Սեբաստացին վարժարան է բացել: Յայտնի չէ նաև թէ մեզ հետաքրքրող ձեռագիրը որտեղից է բերուած Վենետիկ. Շոռոթից թէ Վարատինից: Անյայտ է ձեռագրի գրիչը եւ տեղը, ուր ընդօրինակուած է մատեանը:

1990ական թուականներին վերջին Մխիթարեան միաբանութեան Ընդհանուր Աբբահայր Հ. Եղիա վրդ. Քիլաղպեանի եւ մայրավանքի Մատենադարանի պատասխանատու երջանկայիշատակ Հ. Վոթանէս վրդ. Ուլուհոնեանի բարեհամբոյր թոյլտուութեամբ կարողացայ Վենետիկում ծանօթանալ թ. 1661 ձեռագրի հետ եւ ինձ հետաքրքրող էջերը լուսանկարել:

Սեփական հետախուզութեամբ պարզեցի, որ իմ ձեռքին է գտնուում ԺԴ. տիտղոսների բիւզանդական կանոնագրքի Ժ. դարի ժողովածոյի Հայերէն թարգմանութիւնը, որի հեղինակը Զ. դարի Կոստանդնուպոլիսի պատրիարք Յովհաննէս Սքոլաստիկոսն (565-577) է: Ձեռադրում ուղղակի վկայութիւն կայ այն մասին, որ Հայերէն թարգմանուած ԺԴ. տիտղոսների կանոնագրքի բնագիրը թարգմանուած է մի օրինակից, ուր ընդօրինակուած է 920ին Կոստանդնուպոլատում հրաւիրուած եկեղեցական ժողովի կանոնների հետ մէկտեղ: Այս պարագան թոյլ է տալիս ենթադրել, որ մեր ձեռքը հասած Հայերէն ժողովածոյն ընդօրինակուել է 920ից յետոյ: Բացի Հայերէն խմբագրութիւնից պահպանուել են Բիւզանդական ԺԴ. Տիտղոսների Նոմոկանոնի յունաբէն, արաբերէն, վրացերէն եւ սլաւոներէն թարգմանութիւնները: Վերջինս սլաւոնագիտական հետագօտութիւններում անուանուում է նաեւ «Կօրմչա Կնիրա», որի ամենաբեղմնաւոր հետագօտողը եւ յունաբէն բնագրի հրատարակիչն է Եղել ոռու ակադեմիկոս, բիւզանդագէտ Բենեշեւիչը, որ 1936ի գոհերից մէկը դարձաւ Խորհրդային՝ ստալինեան անձի պաշտամունքի:

ԺԴ. տիտղոսների յայտնաբերուած ժողովածոյն համապատասխանում է յունաբէնով պահպանուած այս յուշարձանի վաղ խմբագրութիւններին, ուր դեռեւ չեն խառնուած միմեանց բիւզանդական եկեղեցական եւ քաղաքացիական իրաւունքի յուշարձանները եւ դեռեւ բնագիր չեն մուծուած ԺԱ.-ԺԲ. դարերի:

Աաեւ ՊՈՏՈՒՐԵԱՆ, Հ. Մ., «Հայ համրագիտակ»ի քարեկամներուն, ի Հայ համրագիտակ, Գիրք Բ., թ. 2, Պուբլէշ 1938:

9 ԽՆՃԻՃԵԱՆ, Հ. Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն երկրորդ, Ելրոպիա, Խո. Դ., Ս. Ղազար, Վենետիկ 1802, 301-302:

բիւզանդական կանոնագէտներ Բալսամոնի¹⁰ եւ միւսների մեկնութիւնները: Այս հանդամանքով կարելի է պարզել ժողովածոյի թարգմանութեան մօտաւոր ժամանակը: Այն համընկնում է հաւանաբար ԺԱ.-ԺԲ. դարերի հայ քաղկեդոնականների մատենագրական գործունէութեան հետ: Հետեւալիքս, այս ժողովածոյի հայեցէն թարգմանութիւնն ամենայն հաւանականութեամբ պատկանում է ԺԱ.-ԺԲ. դարերի հայ-քաղկեդոնական միջավայրին, որ վանքերի ցանց ունէր Սինայում, Երուսաղէմում, Աթոսում, Սեւ Լեռներում, Փիլիպոպոլում, Տայքում եւ այլուր: Քաղկեդոնական հայեցի մատենագրական գործունէութիւնը հայագիտութեան մէջ համակողմանիօրէն ուսումնասիրուած չէ: Միակ՝ քիչ թէ շատ համապարփակ հետազօտութիւնն այդ բնագաւառում, մատենագրական սկզբնաղբիւրների եւ ձեռագրական նիւթերի վերհանումով, ցայսօր պատկանում է Հ. Ակինեանին, որն իր «Սիմեոն Պղբնահանեցի» մենագրութեան յաւելուածն ամբողջովին նուիրել է մեզ հետաքրքող խնդրին¹¹:

Հրատարակուող կանոնագիտական բնագիրը մասն է կազմում բիւզանդական «Ճ.Դ. տիտղոսների կանոնագիրք»ի, որի այլալեզու բնագրերի հետազօտութեամբ եւ հրապարակմամբ զբաղուել է եկեղեցական կանոնագէտների, բիւզանդագէտների եւ արեւելագէտների մի քանի սերունդ: Առանձնակի յիշատակութեան է արժանի կարդինալ Պիտրայի կողմից Փոտ պատրիարքին վերագրուած¹² բիւզանդական կանոնագրքի հետազօտութիւնն ու բնագրերի հրապարակումը 1866ին եւ Ժ. դարի սկզբին Ռուսաստանի Գրտութիւնների Ակադեմիայի իսկական անդամ Վ. Բենեշեւիչի հետազօտութիւնները, որնց հիմքի վրայ վերջինս փորձեց վերակազմելով Հրապարակել «Կօրմչա Կնիգա»-ի սլաւոնական բնագիրը¹³:

Վ. Բենեշեւիչը¹⁴ եւ գերմանացի պատմաբան Է. Շուարցը¹⁵ իրենց հետազօտութիւններով կարողացան ապացուցել, որ բիւ-

10 BECK, H.-G., *Kirche und theologische Literatur im byzantinischen Reich*, München 1959, 657-658:

11 Ա.ԿԻՆԵԱՆ, Հ. Ն., Սիմեոն Պղբնահանեցի, Յշ. աշխ., 225-262:

12 PITRA, J.-B., *Des Canons et des Collections canoniques de L'Église grecque, d'après l'édition de M. G. A. Rhalli*, Librairie de A. Durand, Paris 1858, 26, 37-48.

13 Древне-славянская Кормчая XIV титулов без толкований / Труд В.Н. Бенешевича, т. I, Императорская Академия Наук, СПб. 1906.

14 БЕНЕШЕВИЧ, В.Н., *Канонический сборник XIV титулов со второй половины VII века до 883 г.*, СПб. 1905, с. 3-4, 15-25:

զանդական կանոնագիրքը, որի կազմում սկսած ԺԲ. դարից (Ապանոնագիտ-մեկնաբան Բալսամոնի կողմից) վերագրում էր Կ. Պոլսի Փոտ պատրիարքին (858-68, 877-86) եւ անուանում է Նոմոնականոն, իր նախօրինակն է ունեցել դեռևս Զ. դարում՝ Յովհաննէս Սքոլաստիկոս պատրիարքի (565-577) Հովուապետութեան ատեն եւ յետագայում անուանուել է ԺԻ. տիտղոսների կանոնագիրք, որ ամբողջական տեսք է ստացել Ե. դարի ընթացքում, վերստին խմբագրուել է 882/3ին Փոտ պատրիարքի կողմից, մեկնութիւններով հարստացուել է ԺԱ.-ԺԲ. դարերում¹⁶: Ռուս ակադեմիկոս իր հետազոտութիւններով փորձեց ապացուցել, որ սլավոնական «Կօրմայ կնիգա»ն ԺԱ. դարում թարգմանուել է Փոտ պատրիարքի գահակալմանը նախորդած խմբագրութիւնից: Ի տարբերութիւն ԺԲ. դարի բիւզանդական կանոնագիտ Բալսամոնի օգտագործած բնագիրի, Զ. դարի կէսերից յետոյ կազմուած ժողովածուն (իր տարբեր խմբագրական տարբերակներով) կանոնների համահաւաք է, ուր բացակայում են աշխարհիկ իրաւական յուշարձանների վրայ կատարուած յղումները: Այս նոյն բնագրի բիւզանդական տարբեր խմբագրութիւններից է թարգմանուել այն նաեւ վրացերէն¹⁷ եւ Քրիստոնեայ Արեւելքի մի շարք (ասորերէն, արքաբերէն, դպտերէն, եթովպերէն եւն.) յեղուններով¹⁸:

Ամենայն հաւանականութեամբ, այս ժողովածոյի նախնական տարրերակի հետ գործ ունենք նաև հայկական բնագրի պարա-

¹⁵ Ed. SCHWARTZ, *Die Kanonessammlungen der alten Reichskirche. – Zeitschrift der Savigny-Stiftung für Rechtsgeschichte Abteilung*, Vol. 25 (1936), Issue 1, S. 2-3.

¹⁶ BECK, H.-G., *Kirche und Theologische Literatur im byzantinischen Reich*, München, C.H. Beck'sche Verlagsbuchhandlung, 1959, 146; TROIANOS, S.N., *Oi peges tou buzantinou dikaiou, Athina* 1999, 134-137, 144-147: *հվեն*. В.Н. БЕНЕШЕВИЧ, *Канонический сборник XIV титулов...*, 52-86:

¹⁷ Այս կանոնագրին միջնադարեան վրացերէն թարգմանութեան բնագրի ամբողջական հրապարակումը ընդարձակ առաջարանով տե՛ս օօօօ Նշյուռօ- կաճօռօ / Ճամասցյալ մասմանց յ յածումնացումնա, յ յօնացնացումնա, մ. օօ- լայօնց յ, զ. նօնցամ, տօնուուու, ճամամցյալուն մայցնոյրցնա, 1975 (ԳԱԲԻ- ԶԱՇՈՒԽՆԱԿ, է. - ԳԻՈՒՆԱՇՈՒԽՆԱԿ, է. - ԴՈԼԱՎՐԻՑՆԱԿ, Մ. - ՆԻԽՈՒՍ, Գ., ՀԵՐԱ). Մեծ բանիսամունք՝ “Գիտութիւն” հրատարակչառուն, Թրիխիս 1975):

18 KAUFHOLD, H., *Sources of Canon Law in the Eastern Churches*, in *The History of Byzantine and Eastern Canon Law to 1500*, HARTMANN, W. – PENNINGTON, K., (ed.), The Catholic University of America Press, Washington 1984, 215-342, յատկապես, էջ 222 և շարունակ, 227, 246 և շարունակ, 255 և շարունակ, 297 եւն.:

գայում, որը պահպանւում է Վենետիկի Մխիթարեան մատենադարանում¹⁹: Հայերէնով պահպանուած ԺԴ. տիտղոսների կանոնագրքի միակ ձեռագրում բացակայում է ժողովածոյի յունարէնով եւ այլ լեզուներով պահպանուած թէ՛ նախափոտեան, եւ թէ՛ փոտեան նախաբանները²⁰: Վենետիկեան ձեռագրի առաջին մասում բերուած է «ԺԴ. տիտղոսների կանոնագրք»ի յօդուածների բովանդակային՝ համեմատական-սիստեմաւորուած ցանկը, որը բաժանուած է 14 տիտղոսների (Հայերէնում՝ «քղթերի»): Այստեղ տարբեր վերնագրերի տակ նշում են այն կանոնները, որոնք բովանդակային համապատասխանութիւններ ունեն եւ կողմնորոշել են ամբողջական ժողովածոյի գիտութեանը յայտնի՝ «ԺԴ. տիտղոսների կանոնագրքի» վերնագրիրը: Այնուհետեւ՝ հայերէնով պահպանուած բիւզանտական կանոնագրքի երկրորդ մասում, յունարէն բնագրի հետեւողութեամբ բերուում են Առաքելական կանոնները, եօթ Տիեզերական ժողովների (Ա. Նիկիա, Ա. Կ. Պոլիս, Եփեսոս, Քաղկեդոն²¹, Բ. Կ. Պոլիս, Գ. Կ. Պոլիս, Բ. Նիկիայի), Տիեզերական եկեղեցու տեղական ժողովների (Անկիւրիա, Նոր Կեսարիա, Գանդրա, Անտիոք, Լաոդիկիա, Սարդիկի, Կարթագէն եւն.), եկե-

19 ԲՈՂՈՅԵԱՆ, Ա., Հայ միջնադարեան իրաւումնի պատմութեան յուշարձամ-ները, ի Էջմիածին, ԿԲ. (2006), է - Ը, 104 - 105:

20 Ձեռագրի պահպանուածութեան մասին պատկերացում կազմելու համար, ըստ մամուլահամարների ներկայացնենք պահպանուած քերքերը: Բացակայում է ձեռագրի սկիզբը: :Ա: մամուլից պահպանուել է թղ. 1ա-ք վերշնի թերթերը, որից առաջ, պէտք է ենթադրեն, գտնուում էր ժողովածոյի նախարարն: :Բ: մամուլը 7 թերթ է (թղ. 6ա-12թ): Առկայ է :Գ: մամուլի սկիզբի (13ա-19թ) եւ :Դ: մամուլի վերջի (20ա-29թ) թերթերը: :Ե: մամուլն ունի 12 թերթ (30ա-41թ): :Զ: մամուլն ունի 14 թերթ (42ա-55թ): :Լ: մամուլն ունի 12 թերթ (թղ. 56ա-67թ): Առկայ է :Ը: մամուլի սկիզբը (68ա), :Թ: (-89թ), :Ժ: (-99այ), :ԺԱ: (-109թ), :ԺԲ: (-121թ) մամուլների վերջի թերթերը: :ԺԳ: մամուլն ունի 11 թերթ (122ա-131թ): :ԺԴ: - :ԻԴ: մամուլներից իւրաքանչիւրն ունի 12 թերթ: :ԺԴ: (132ա-143թ), :ԺԷ (144ա-155թ), :ԺԶ: (156ա-167թ), :ԺԸ: (168ա-179թ), :ԺԸ: (180ա-191թ), :ԺԹ: (192ա-203թ), :Ժ: (204ա-215թ), :ԻԱ: (216ա-227թ), :ԻԲ: (228ա-239թ), :ԻԳ: (240ա-251թ), :ԻԴ: (252ա-261թ): Վերջին՝ :ԻԸ: մամուլն ունի 11 թերթ (262ա-272թ): Նշանակում է :Բ:, :Գ:, :Դ:, :Ը:, :Թ:, :Ժ:, :ԺԱ:, :ԺԲ:, :ԻԸ: մամուլները ամբողջական չեն: Ձեռագիրը պահպանուուր է հանձ վերջից:

21 Այս ժողովի կանոնախոսմբ առաջին անգամ հրապարակուել են անցեալ տարի, իբրև օրինակ ԺԴ Տիտղոսների կանոնագրի հայերէն թարգմանութեան օրինակ: Տե՛ս Ա. ԲՈՂՈՅԵԱՆ, Քաղկեդոնի Տիեզերական ժողովի կանոնների միջնադարեան հայկական թարգմանութիւնը. – Էջմիածին, 2016, Ը, էջ 11-48:

ղեցու Ս. Հայրերի (Բարսեղ Մեծ, Գենազիոս, Յովհան Միայնակեաց, Մաքսիմիոս, Սեւերիանոս, Գրիգոր Նիւսացի, Թէոփիլոս, Տիմոթէոս, Աթանաս, Կիւրեղ եւ Դիոնիսիոս Աղեքսանդրացիներ, Գրիգոր Սքանչելագործ եւն.) կանոնախմբերը: Կանոնախմբերի հայերէն բնագիրը երբեմն ընդմիջուում է մեկնութիւններով («սխոլիոն»): Յատկանշական է, որ հայերէնով պահպանուած բնագրի թիւ: (40) կանոնախմբի իբրեւ վերնադիր պահպանուել է հետեւեալ յիշատակագրութիւնը. «ի սինոդոսէն, որ նղեւ ի միաւորութիւն եկեղեցւոյ յաւորս կոստադիանոսի եւ Ռամանոսի, միմն քագաւորել իսկ միւսն որ յայնժամ որպէս հայր քագաւորի արժանաւորութիւնն ունել» (թղ. 167թ). Ամենայն հաւանականութեամբ խօսքը վերաբերում է 920 թ. կ. Պոլուում տեղի ունեցած եկեղեցական ժողովին, ուր քննարկուել է եկեղեցու կողմից արգելուած չորրորդ ամուսնութեանը վերաբերող խնդիրները: Յիշատակուած կանոնախմբի գոյութիւնը հայերէն թարգմանուած բիւզանդական կանոնագրքում թոյլ է տալիս ենթագրել, որ այդ բնագրի յունարէն նախատիպը մասնակիորէն լրացուել է Ժ դարում կամ դրանից յետոյ: Բիւզանդական կանոնագիտական գրականութեան մէջ տիրապետում է այն գրոյթը, որ հէնց այդ՝ 920 թ. Հրաւիրուած ժողովում է Բիւզանդական կայրութիւնը հաստատել օրթոդոքս եկեղեցում այս ժողովածուն²²: Ժդ տիտղոսների բիւզանդական կանոնագրքի բնագրի լրացման մասին է յուշում նաեւ հայերէնով պահպանուած թարգմանութեանը ուղեկցող՝ բուլզարների իշխան Միքայէլին վերագրուող «յաղագ եւարեն Սուրբ Տիեզերական եւ մեծամեծ սինոդոսացն եւ թէ զինչ է պատճառ նոցա ժողովելոյն» (թղ. 259ա-271թ) բնագիրը²³: Բիւզանդական մատենագրութեան գիտակներին յայսին է յիշատակուած Միքայէլի մի դաւանարանական նամակը նույիրուած Ս. Հոգուն²⁴: Հայերէն թարգմանութեամբ պահպանուած յիշատակուած երկը մի նոր վկացութիւն է բիւզանդական կանոնագիտական մատենագրութեան հետազոտութեանը հայ մատենագրութեան բերած նպաստի մասին: Այն միաժամանակ յու-

22 Տե՛ս H.-G. BECK, *Die Kirche ...*, S. 56: Ըստ վրաց Ժդ տիտղոսների կանոնագրքի հրասարակիչ՝ կ. Գարիձաշուիլու վրացերէն քարգմանութեան համար հիմք հանդիսացած յունարէն բնագիրը պաշտօնականացնուել է հենց այդ ժողովում տե՛ս ջօջօնշաշուղանունու...», էջ 3, 94:

23 Երկն հաւանարար կարելի է վերագրել Միքայէլ Վիսելիչին, որն ապրել է Ժ դարի առաջին կեսում. տե՛ս *The Oxford Dictionary of Byzantium / Prepared at Dumbarton Oaks Alexander P. Kazhdan ...*, v. 2, New York, Oxford University Press, 1991, p. 1370.

24 Տե՛ս H.-G. BECK, *Die Kirche ...*, S. 526:

շում է, որ հայերէնով թարգմանուած կանոնագրքի յունարէն նախատիպ-բնագիրը չէր կարող աւելի վաղ դրուած լինել քան ժադարի Բ. Կէսը, իսկ հայերէն ներկայ թարգմանութիւնը կատարում է անշուշա ԺԱ. դարի վերջին կամ ԺԲ. դարի սկզբին: Պահպանուած հայերէն բնագրի իւրայատկութիւններից մէկն էլ ժդ Տիտղոսների կանոնագիրք-ժողովածոյի առաջաբանների եւ կանոններին ուղեկցող վերնագրերի բացակայութիւնն է²⁵: Հայերէնով պահպանուած կանոնագրքում բիւզանդական աշխարհիկ իրաւունքի յուշարձանների որեւէ յլում չենք կարողացել գտնել: Դա էլ ապացոյց է, որ մեզ հասած հայերէն ժողովածոյում տեղ չեն գտնել Բալսամոնի եւ նրա յաջորդների լրացումները:

Հայերէն թարգմանութեամբ պահպանուած ժդ տիտղոսների կանոնագրքի գլխակարգութիւնը հիմնականում համապատասխանում է կարտինալ Պիտրայի եւ Վ. Բենեշելիչի հրապարակած յունարէն բնագրերին: Հայերէն բնագրի ամբողջական հրապարակումը թոյլ կը տայ աւելի ամբողջական պատկերացում կազմել ԺԱ. դարում շրջանառութեան մէջ եղած ժդ տիտղոսների այն յունարէն նախատիպի մասին, որը կիրառուել է բիւզանդական կայսրութեան տարածքում եւ թարգմանուել է բիւզանդական կայսերական եկեղեցուն հպատակ եկեղեցական կառոյցների կողմից (մելկիս, սլաւոն, վրաց եւն.), ինչպէս նաեւ, ներկայ ձեռագրի հաւասարմբ, Երկարնակ կամ ծաթ կոչուած հայերի կողմից: Ցիշատակուած խմբագրութիւնների համեմատական հետազոտութիւնը կարող է բացել նոր Հորիզոններ բիւզանդական արեւելքի հոգեւոր-եկեղեցական կեանքը եւ աշխարհընկալման իւրայատկութիւնները բացայատելու համար: Յատկանշական է, որ հայերէնով պահպանուած բիւզանդական կանոնագրքի հարուստ բովանդակութիւնը տառացիօրէն չի կրկնում բիւզանդական ԺԴ. տիտղոսների կանոնագրքի յայտնի ձեռագիր-կանոնագրքի գիտութեանը յայտնի ձեռագրախմբերից որեւէ մէկը²⁶: Այս կանոնագրքի կարեւորութիւնը գեռեւս չի բացայատուած Հայոց կանոնագիտական գրականութեան դարաւոր փորձի հետագոտութեան տեսանկիւնից: Այդ իսկ պատճառով նախատեսում ենք մօտակայ ժամանակներում ամբողջովին հրապարակել մեզ հասած հայերէն բնագիրը:

ԱԶԱՏ ԲՈՉՈՅԵՍՆ

25 Տե՛ս ԲԵՆԵՇԵՎԻԿ Վ.Ն., Կանոնիկ սեմինար ԽIV տիտուլով..., ս. 93-104:

26 Տարրեր ձեռագրախմբերի նկարագրութիւնները տե՛ս Բենեշևիկ Վ.Ն., Կանոնիկ սեմինար ԽIV տիտուլով..., ս. 116-321:

Summary**VENETIAN MANUSCRIPTS OF THE BYZANTINE
NOMOCANON**

AZAT BOZOYAN

The Armenian written tradition preserved the text of the translation of the Byzantine canonical collection – Nomocanon's 14 titles. Perhaps the collection has been translated by the Chalcedonian Armenians, whose literary activities have not been studied enough in Armenian studies. This canonical collection has been saved in a single manuscript found at the Mechitarist Fathers' library in Venice. The article gives a brief history of the study of this monument, and summarizes the content and significance of the collection for Byzantine studies and armeniology.